

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԱՌԱՋԻՆ ՆԱԽՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ**

Կ'ալեկոծին երկու ծովեր, երկու անհոն՝ դէմ յանդիման...
 Մէկն՝ ափերուն կու տայ ցնծուն սպասումին իր շափիւղան,
 Միւսն՝ յոյսի լայն թեւերով հորիզոններ կը նուաճէ,
 Երբ հրակէզ մեր երազին ու կարօտին բոցէն ծնած՝
 Կը յայտնուի առաջին նա՛ն հայրենադարձ:

Խոհերէ խոհ ու սիրտէ սիրտ կը զարնուին, ալիք ալիք,
 Երէկն՝ իբրեւ անէծք ու վիշտ, վաղն՝ անսահման խինդի տեսիլք.
 Ու երբ լոյսի սիւնի մը պէս կ'ամբառնայ ծուխը ծխանին,
 Ամէն աչքէ կարծես դարե՛ր, իրենց շիրմին քարը նետած,
 Կ'արփողջունեն առաջին նա՛ն հայրենադարձ:

Դրօշն անոր կը թրթռայ՝ ազատութեան երգի նման,
 Ու պարաններն իր կայմերուն՝ թեւերն են բաց եղբայրութեան.
 Սոյլը փողին՝ կանչն է հողին, հայրենի տա՛ն եւ արեւին
 — Կոչը՝ դարձի, միացումի՛, զոր ծագէ ծագ, համատարած,
 Կ'աւետերգէ առաջին նա՛ն հայրենադարձ:

Մինչեւ քարափ ու նաւակայք, կայաններէն օտարութեան,
 Յորձանք յորձանք կը բոցկլտայ զարթնած հոգին արմենական...
 Գետի մը մեծ՝ ջուրն է կարծես, որ ճիւղ առ ճիւղ ցամքելէ վերջ,
 Կախարդ ձեռքի մը շարժումով՝ արդ հարազատ հոնն է գտած,
 Եւ առաջին նաւն է ջրանցքն հայերնադարձ:

Արեւն՝ ոսկի՛ հիացման մէջ կ'անշարժանայ պահ մը հիմա,
 Կ'ըլլայ համբոյր ու կը տեղայ մեկնողներու հոգւոյն վրայ...
 Մինչ՝ ստուերի մէջ կը գծուին ու կը սուզին նաւեր ուրիշ,
 Որ կորուստի, թշուառութեան նոյն ափն էին օր մը թափած՝
 Յաւի, լացի իրենց սեւ բեռն հայրենախանձ:

Մեկնումի փողն է արդ վերջին... այնքան ուրախ՝ որքան տրտում...
 Թաշկինակներ ձեռքերու մէջ՝ բացուած սիրտե՛ր են բաբախուն...
 Քարափն ամբողջ կը հառաչէ ու կը հեւայ համատրոփ,
 Երբ որպէս երգ, որպէս երազ, առաջին երթ ու վերջին լաց,
 Նաւը կ'առնէ իր ճանապարհն հայրենադարձ:

Կը բազմանայ երթը տակաւ, կ'ըլլայ անթիւ ու անվախճան...
 Հողէն, հովէն ու երկինքէն հոն կը խուժեն, երամ երամ,
 Պանդխտութեան մէջ թափառիկ հին հոգիներն արմենազարմ:
 Հայրենիքի սիրտէն ժայթքող անհուն սիրովն հիմա արբած
 Ա՛զգ մ'է ամբողջ՝ առաջին նա՛ն հայրենադարձ:

ՎԱՏԷ-ՎԱՏԵԱՆ